ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ՄԱՍՆԱԿԱՆ ՀՈԴԻ ԻՄԱՍՏՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Ֆրանսերենի հոդերի համակարգում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում մասնական հոդը, որը գործածվում է ոչ թվարկելի գոյականների հետ և առանձնացնում է դրանց ընդհանուր ծավալի անորոշ մասը: Լեզվի ժամանակակից փուլում մասնական հոդը զգալիորեն ընդլայնել է իր իմաստագործառական դրսևորումների սահմանները և կարող է հանդես գալ նաև թվարկելի գոյականների հետ: Իմաստային տեսանկյունից մասնական հոդը անորոշ հոդի տարատեսակ է, քանի որ այն առանձնացնում է ոչ թվարկելի զանգվածի մի մասը միայն, անորոշ հոդը, ինչպես գիտենք, առանձնացնում է դասի մեկ անդամին: Ձևաբանական տեսանկյունից մասնական հոդը մոտենում է որոշյալ հոդին, քանի որ ծագումնաբանորեն կազմված է *de* նախդրի և որոշյալ հոդի *le, la, l'* ձևերից:

Լեզվաբանության մեջ բազմիցս խոսվել է եզակի անորոշ և մասնական հոդերի գործառույթային նմանության մասին: Այսպես, Գիյոմը նշում է, որ «[du, de la] ձևերն իրենց գործառույթով գտնվում են un հոդի հետ միևնույն պլանում»[1]: Գալմիշը գտնում է, որ մասնական հոդն իր իմաստային արժեքով ավելի մոտ է անորոշ հոդի հոգնակի ձևին, քան եզակիին[2]:

Մյուս կողմից, լինելով մասնակիություն-ամբողջականություն իմաստային հակադրության անդամ, մասնական հոդը որոշյալ հոդի հետ որոշակի

---

[1] G. Guillaume, Le problème de l'article et sa solution dans la langue française, P., 1919, p. 60. Անորոշ և մասնական հոդի իմաստային նմանության մասին տե՛ս նաև R. Martin, De la double "extensité" du partitif, Langue française, P., 1983, N 57, էջ 34-42; И. Н. Лукащук, Значение и употребление партитивного артикля в современном французском языке, Ученые записки МОПИ им. Н. Крупской, М., 1958, т. 64, стр. 172-173; А. И. Рохленко, Об основном грамматическом значении частичного артикля, Ученые записки ЛГПИ им. Герцена, Л., 1959,т. 212, стр. 106-107; E. A. Référovskaya, A. K. Vassiliéva, Essai de grammaire française, M.-L., 1964, p. 57.

[2] Տե՛ս M. Galmiche, Note sur les noms de masse et le partitif, Langue française, P., 1986, N 72, էջ 40-53: Տե՛ս նաև Е. О. Костецкая, Употребление артикля частичного, Иностранные языки в школе, М., 1949, N 4, էջ 48-50:

շարակարգային պայմաններում գտնվում է լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ, հմմտ. *Il achΠte normalement du pain au levain* և *Le pain est sur la table*: Մասնական հոդը կարող է արտահայտել նաև որոշյալ հոդին հատուկ ընդհանրական-հավաքական իմաստ, հմմտ. *Dans ces endroits il y a du moustique* և *Le moustique pullule dans ces endroits*[3]: Հոդի զուտ մասնական իմաստը հանդես է գալիս որպես ավելի լայն իմաստի՝ քանակական անորոշության արտահայտման մասնավոր դեպք: Քանակական անորոշությունը քերականական իմաստ է, ի տարբերություն ոչ թվարկելիության, որը բառային իմաստ է[4]:

Երբ մասնական հոդը չի արտահայտում քանակական անորոշության իմաստ, այսինքն՝ մասնակիություն, նրա կիրառումը հանգեցնում է բառիմաստի տեղաշարժի կամ գոյականի քերականական կարգի փոփոխության: Առաջին դեպքում գոյականը հանդես է գալիս փոխանվանական արժեքով, ինչպես՝ *Elle lit du Balzac* կամ *un veau - du veau* (հորթի միս): Երկրորդ դեպքում գործ ունենք մասնական հոդի ապագոյականացնող՝ գոյականի միջոցով հատկանիշի իմաստի արտահայտման հետ, ինչպես՝ *Il y a de l'homme dans le chien*[5]:

Անորոշ և որոշյալ հոդերի հետ ունեցած իմաստային ընդհանրություններով և դրանցից բխող գործառական առանձնահատկություններով էլ պայմանավորված է մասնական հոդի գործառության սահմանների ընդլայնումը: Փաստորեն, մասնական հոդը գործառում է քանակական անորոշության քերականական իմաստի և թվարկելիության-ոչ թվարկելիության բառային իմաստների միջև գոյություն ունեցող տարատեսակ հարաբերություններում, որոնք բովանդակության և արտահայտության պլանների միջև սիմետրիայի և ասիմետրիայի արդյունք են: Երկու պլանների սիմետրիայից և ասիմետրիայից էլ առաջանում են լեզվական միավորների, տվյալ դեպքում՝ մասնական հոդի առաջնային և երկրորդային կիրառությունները: Նշենք, որ զուտ մասնականությունը արտահայտվում է քանակական անորոշության քերականական իմաստի

---

[3] Մասնական և որոշյալ հոդերի մրցակցության մասին տե՛ս A. Référovskaya , A. K. Vassiliéva, նշվ. աշխ., էջ 60:
[4] В. Г. Гак, Теоретическая грамматика французского языка, М., 2000, стр. 192.
[5] Օրինակը Գակինն է, տե՛ս В. Г. Гак, նշվ. աշխ., էջ 194:

և ոչ թվարկելիության բառային իմաստի միասնության միջոցով: Նշված երկու իմաստների միասնությունը պայմանավորված է մասնական հոդի առաջնային գործառումով, այսինքն՝ ձևին իմաստի և գործառույթի համապատասխանելու միջոցով:

Մասնական հոդի իմաստագործառական առանձնահատկությունները և դրանց ընդհանրությունը անորոշ հոդի հետ կարելի է պարզաբանել՝ առաջադրելով և լուծելով հետևյալ խնդիրները.

1) մասնական հոդի առաջնային՝ առանձնացնող գործառույթի և քանակական անորոշության քերականական իմաստի հակադրում անորոշ հոդի առանձնացնող գործառույթի և որակական անորոշության քերականական իմաստի հետ, 2) հոգնակիության Ø դրսևորում մասնականության դեպքում, 3) մասնական հոդի ասիմետրիկ՝ ընդհանրական-հավաքական, փոխանվանական և ապագոյականացնող գործառույթների բացահայտում: Այս խնդիրները կպարզաբանենք ստորև բերվող գծապատկերի միջոցով:

թվարկելիություն	ոչ թվարկելիություն
(թիվ)	(ոչ թիվ)
եզակիություն	մասնակիություն
A (un)	A1 (du)



B (des)	B1 (le)
հոգնակիություն	ամբողջականություն

Մասնական հոդի իմաստագործառական առանձնահատկությունները վերլուծելու և անորոշ հոդի հետ ունեցած ընդհանրությունները համակարգելու համար հիմք են ծառայելու գոյականի թվարկելիության (այսուհետև՝ Թ) և ոչ թվարկելիության (այսուհետև՝ Թ0) իմաստները: Թ-ն A→B ընդգրկման հարաբերությունն է, որտեղ A-ն դասի մեկ միավոր առարկա նշանակող

գոյականն է, իսկ B-ն՝ նույն դասի բազմաթիվ առարկաներ նշանակող գոյականը, այսինքն՝ un1+un2+un3+unn=des: Թ0-ն A1→B1 ընդգրկման հարաբերությունն է, որտեղ A1-ը ոչ թվարկելի գոյականով անվանվող նյութի անորոշ մասն է, իսկ B1-ը՝ ծավալն ամբողջությամբ, այսինքն՝ du1+du2+du3+dun=le[6]:

Անորոշ և մասնական հոդերի գործառույթային նմանությունը պայմանավորված է ընդգրկման հարաբերությունների առկայությամբ. թվարկելի գոյականի դեպքում այդ գոյականով անվանվող առարկաների դասն ընդգրկում է այդպիսի առարկաների հոգնակիություն, անորոշ հոդն առանձնացնում է դրանցից որևէ մեկը կամ բազմաթիվ այդպիսի առարկաներ, ոչ թվարկելի գոյականի դեպքում այդ գոյականով անվանվող նյութի ողջ ծավալը բաղկացած է նույն նյութի տարբեր մասնաբաժիններից, և մասնական հոդն առանձնացնում է այդ ծավալի անորոշ մասը: Այսպիսով, գործառույթային առումով, երկու հոդերի սիմետրիկ դրսևորման, այսինքն՝ արտահայտության և բովանդակության պլանների համապատասխանության դեպքում, առկա է առանձնացման գործառույթը: Վերը բերված գծապատկերում գործառույթային այս նմանությունն արտացոլված է AA1 կետագծով:

Անորոշ և մասնական հոդերն ունեն նաև շարակարգային բնույթի երկու ընդհանրություն. 1) նախադաս որոշչին և ժխտական նախադասություններում խնդրին նախորդող դիրքերում մասնական հոդը, ինչպես և հոգնակի անորոշ հոդը, ունի իր դիրքային *de/d'* տարբերակները, հմմտ. (1) և (2), (3) և (4) օրինակները.

(1) Les puits sahariens sont de simples trous creusns dans le sable

---

[6] Վերաբերության տրամաբանական տեսությունների տեսանկյունից հնարավոր է նաև du₁+du₂+du₃+du₄=du₅, եթե մասը դիտվում է որպես ավելի փոքր մասնաբաժինների ամբողջություն: Գալմիշն այս առնչությամբ առաջարկում է նույնակազմ վերաբերության աքսիոմը (axiome de la rmfnrence homogRne), այսինքն՝ որևէ նյութի ծավալին նույն նյութից ավելացնելով կամ այդ ծավալի որևէ մասը վերցնելով՝ նյութը չի փոխում իր կազմությունը, և տվյալ նյութը անվանող գոյականը կվերաբերի ինչպես դրա փոքր, այնպես էլ մեծ ծավալին: Տե՛ս M. Galmiche, նշվ. աշխ., էջ 46: Մարտենը նյութի ծավալի՝ ավելի փոքր մասնաբաժինների տարաբաժանվելն անվանում է ենթամասի չափանիշ (critRre de sous-ensemble), իսկ տվյալ ծավալին նույն նյութից ավելացնելու հետևանքով նյութի չփոփոխվելն անվանում է վերամիավորման չափանիշ (critère de réunion), այս երկու չափանիշները մասնական և անորոշ հոդերի համար հավասարարժեք չեն: Տե՛ս R. Martin, նշվ. աշխ., էջ 36:

(Exupnry).

(2) Il (Loiseau) vendait à très bon marchn de trΩs mauvais vin aux petits dnbitants des campagnes... (Maupassant).

(3) Mon ami ne donnait jamais d'explications (Exupnry).

(4) En France, on n'a pas de pntrole, mais on a des idnes (Devos).

2) հոգնակի անորոշ և մասնական հոդերով կիրառված գոյականը *en* դերանվամբ փոխարինելու հնարավորություն, հմմտ. (5) օրինակը (6)-ի հետ.

(5) Elle a des disques amnricains.- Elle en a.

(6) Chez ce restaurateur on peut toujours boire d'excellent vin. - Chez ce restaurateur on peut toujours en boire.

Ինչ վերաբերում է երկու հոդերի արտահայտած անորոշության իմաստին, ապա եզակի անորոշ հոդն արտահայտում է որակական, իսկ մասնական հոդը՝ քանակական (ծավալային) անորոշություն, որով ավելի մոտ է հոգնակի *des* հոդին: Սակայն այդ նմանությունը չի կարող հիմք ծառայել *des* ձևը նաև որպես մասնական հոդի հոգնակի ձև դիտելու համար ինչպես դա անում են որոշ լեզվաբաններ: Ոչ թվարկելիությունը ընդհանրապես մերժում է հոգնակիությունը, ոչ թվարկելի գոյականը միշտ եզակի է. «Եզակիությունը,– նշում է Կոպիտինան, – պարտադիր չէ, որ թվարկելիություն ենթադրի, իսկ վերջինս միշտ ենթադրում է եզակիություն»[7]: Որպես ապացույց կարող է ծառայել այն փաստը, որ նյութ և վերացական հասկացություններ արտահայտող գոյականները մեծ քանակ ցույց տվող բառերից հետո դրվում են եզակի թվով, օրինակ՝ *beaucoup de sable, trop d'eau, beaucoup de bonheur* և այլն: Ուրեմն ոչ թվարկելի գոյականների դեպքում պետք է խոսել ոչ թե եզակիություն-հոգնակիություն հակադրության մասին, որը չի տարածվում այդ գոյականների վրա, այլ ոչ թիվ-թիվ հակադրության մասին, որի առաջին անդամը դրսևորվում է մասնականություն-ամբողջականություն, իսկ երկրորդը՝ եզակիություն-հոգնակիություն հակադրությունների միջոցով: Եթե աղյուսակի տեսքով ներկայացնենք հակադրությունը ըստ թվի կարգի առկայության-բացակայության, ապա այն կունենա հետևյալ տեսքը.

---

[7] В. Г. Копытина, Место партитивного артикля в системе артикля современного французского языка, Автореф. канд. дисс., Л., 1966, стр. 8.

ոչ թիվ		թիվ	
մասնակի-ություն	ամբողջակա-նություն	եզակիություն	հոգնակի-ություն
ոչ թվարկելիություն		թվարկելիություն	

Ոչ թվարկելի գոյականը սակայն կարող է անցնել թվարկելիների շարքը, հատկապես այն դեպքում, երբ ստանում է որակական բնութագիր[8], կամ երբ վերջինը ենթադրվում է, ինչպես՝ *du pain - un pain* (որպես հացատեսակ) - *des pains, du vin - un vin français - des vins français, du bruit - un bruit inattendu - des bruits inattendus* և այլն:

Հասկացության ծավալի սահմանափակումը ըստ նյութի տեսակի, որակի, ձևի կամ այլ հատկանիշի հանգեցնում է ոչ թվարկելի գոյականը որպես թվարկելի ընկալելուն, այսինքն՝ ոչ թվարկելի գոյականի իմաստը նվազեցվում և սահմանափակվում է (ամբողջականացվում է) որոշակի ծավալի սահմաններում[9]. առարկան դիտվում է որպես մեկ ամբողջություն, հետևաբար՝ այն կարող է լինել ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի թվով: Որակ, հատկանիշ, երևույթ նշանակող վերացական գոյականները թվարկելի դառնալու դեպքում նշում են այդ որակի, հատկանիշի, երևույթի կոնկրետ դրսևորումներ, ինչպես՝ *des coléres, des ennuis*: Հաճախ այդպիսի գոյականները հանդես են գալիս լրացումներով, ինչպես՝ *un silence profond, un bruit insupportable, un amour aveugle* և այլն: Թվարկելի դարձած ոչ թվարկելի գոյականի հետ կարելի է կիրառել նաև տարածական (դեյկտիկ) առկայացուցիչներ՝ ցուցական կամ ստացական ածականներ, որը հնարավոր չէ ոչ թվարկելիության իմաստի դեպքում, օրինակ.

(7) Cette eau était bien autre chose qu'un aliment (Exupéry).

(8) Et de nouveau regnera ce silence solennel... (Mauriac).

---

[8] Հմմտ. M. Wilmet, Les déterminants du nom en français: essai de synthèse, Langue française, P., 1983, N57, p. 27.

[9] Գուրևիչը գտնում է, որ քանակական սահմանափակումը ընկած է որոշյալության կարգի հիմքում: Տե՛ս В. В. Гуревич, О категории „определенность-неопределенность", в кн.: Проблемы языкознания и теории английского языка, М., 1978, вып. 4, стр. 27:

(9) Je n'ai jamais su vers quoi tendait cette puissance forcenne en moi et hors de moi (*ibid*).

(10) Ton indiffnrence me fascine.

Թ₀-ից անցումը Թ-ին կատարվում է ամբողջականության և եզակիության իմաստների միասնության միջոցով (գծապատկերում՝ B1↔A), որը թույլ է տալիս անցնել հոգնակիության՝

ամբողջականություն+եզակիություն⇒[10]հոգնակիություն (B1A→B):

Եզակիության և ամբողջականության իմաստների միասնության միջոցով կարող է տեղի ունենալ նաև հակառակ անցում՝ Թ-ից Թ₀: Այս դեպքում թվարկելի գոյականը ընկալվում է որպես ոչ թվարկելի: Հնարավոր է Թ-ից Թ₀ անցման երեք դրսևորում. 1) մասնական հոդն ունի ընդհանրական-հավաքական գործառույթ, 2) մասնական հոդն ունի փոխանվանական գործառույթ, 3) մասնական հոդն ունի ապագոյականացնող գործառույթ: Երեք դեպքում էլ գործում է եզակիություն+ամբողջականություն⇐մաս անցումը (AB1→A1): Առաջին դեպքում, սակայն, գերակա է ամբողջի իմաստը, մասնական հոդն այստեղ կատարում է ընդհանրական-հավաքական գործառույթ և ենթադրում է դասից նրա առանձին անդամների տարանջատման անհնարինություն, չտարորոշված հոգնակիություն, ինչպես (11) օրինակում.

1. Ընդհանրական-հավաքական գործառույթ.

(11) Il y a de la carpe dans cet ntang.

Մասնական հոդի այս կիրառումը իմաստային և գործառույթային տեսանկյունից նման է հոգնակի անորոշ հոդին, հմմտ. (11ա) օրինակը (11)-ի հետ.

(11ա) Il y a des carpes dans cet ntang.

Վերը բերված գծապատկերում գործառույթային այս նմանությունն արտացոլված է B→A1 կետագծով:

Ամբողջականության գերակա իմաստը գործառության մեկ այլ ոլորտում՝ գոյական-ենթակային նախորդող դիրքում, արտահայտվում է որոշյալ հոդի միջոցով: Ինչպես մասնական հոդի մասնակիության, այնպես էլ ամբողջակա-

---

[10] Սլաքածև հավասարության նշանը ցույց է տալիս ընդգրկման հարաբերության ուղղությունը:

նության իմաստի դեպքում, որոշյալ հոդը այս դիրքում մասնականի հետ գտնվում է լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ, հմմտ. (12) օրինակը (11)-ի հետ.

(12) La carpe abonde dans cet ntang.

Երկրորդ և երրորդ դեպքերում գերակա է մասի իմաստը, որը մի դեպքում ձեռք է բերում փոխանվանական արժեք, ինչպես (13) օրինակում, մյուս դեպքում մասնական հոդն ունի ապագոյականացնող գործառույթ. նրան հաջորդող գոյականի առարկայական իմաստը վերափոխվում է որակի իմաստի, ինչպես (14) օրինակում:

2. Փոխանվանական գործառույթ.

(13) Elle lit du Balzac.

3. Ապագոյականացնող գործառույթ.

(14) Il y a de l'homme dans le chien.

Նշված երեք դեպքերում էլ առկա է մասնական հոդի երկրորդային կիրառումը, այսինքն՝ այն կիրառված է երկրորդային արժեքով:

Այսպիսով, ի մի բերելով վերը շարադրածը, կարելի է ասել, որ մասնական հոդի իմաստագործառական սահմանների ընդլայնումը կապված է գոյականի թվարկելիության–ոչ թվարկելիության իմաստների, թվի կարգի և դրա բացակայության միջև առկա գործառույթային դրսևորումների հետ: